ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/193

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11714-2021 գրությամբ «Կամի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 16.07.2021թ. թիվ ՍՄ//29535-2021 գրության հիման վրա, 21.07.2021թ. թիվ 26/26-1/11714-2021 գրությամբ նախաձեռնել է «Կամի գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Կամի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կամի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Կամի գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/193 ընթացակարգի շրջանակներում 28.07.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.07.2021թ. թիվ ՍՄ//29535-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունվարի 29-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով «Երևանի «մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի մատակարարման հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Երևանի «մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միակողմ լուծել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով մատակարարման պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 5-ի N 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/193 ընթացակարգի շրջանակներում 28.07.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

3. Կողմերի միջև 12.01.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

4. Պատվիրատուն «Կամի գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 15.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքված «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Կամի գրուպ» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ, համաձայն որի «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ը լուծում է վերը նշված պայմանագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 15.07.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11714-2021 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 16.07.2021թ. թիվ ՍՄ//29535-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ.:

Կողմերի միջև 12.01.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Պայմանագրի 8.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ին:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 27.04.2021թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք՝ ներքոստորագրյալներս, «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար հաշվապահ՝ Ա. Գասպարյանս, անդամներ բժշկուհի՝ Մ. Հովհաննիսյանս, պահեստապետ Գ. Հովհաննիսյանս, ինչպես նաև դիետ քույր Կ. Ալեքյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 27.04.2021թ. վերոնշյալ կազմակերպության կողմից մատակարարված 20 կգ մածուն ապրանքատեսակը չի ընդունվել սննդի պատասխանատու ստորաբաժանման կողմից և ետ է վերադարձվել տեխնիկական բնութագրի անհամապատասխանության պատճառով՝ ապրանքատեսակի պիտակը և մակնշումը չէր համապատասխանում տեխնիկական բնութագրում ներկայացվածին:

Կազմակերպությանը տրվել է ժամանակ սեղմ ժամկետում կատարել իր պարտավորությունները»:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 27.04.2021թ. կազմվել է թիվ 2 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք՝ ներքոստորագրյալներս, «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար հաշվապահ՝ Ա. Գասպարյանս, անդամներ բժկուհի՝ Մ. Հովհաննիսյանս, պահեստապետ Գ. Հովհաննիսյանս, ինչպես նաև դիետ-քույր Կ. Ալեքյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից 27.04.2021թ. խախտվել է հայտ-պահանջագրով նախատեսված «ձու» ապրանքի մատակարարման քանակները: Մեր կողմից ներկայացված հայտ պատվերով նախատեսված է եղել 100 հատ ձու, սակայն մատակարարվել է 51 հատ:

Ինչպես նաև, Պատվիրատուի կողմից ներկայացվել է ապրանքի մատակարարման հարկային հաշիվ ապրանքագիր, որով ևս արձանագրվել է, որ 27.04.2021թ. Ընկերության կողմից թվով 100 ձու փոխարեն մատակարարվել է 51 ձու և Ընկերությունը պարտավորվել է լրացնել պակասը:

Կազմակերպությանը տրվել է ժամանակ սեղմ ժամկետում կատարել իր պարտավորությունները»:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 19.05.2021թ. կազմվել է թիվ 3 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք՝ ներքոստորագրյալներս, «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար հաշվապահ՝ Ա. Գասպարյանս, անդամներ բժշկուհի՝ Մ. Հովհաննիսյանս, պահեստապետ Գ. Հովհաննիսյանս, ինչպես նաև դիետ-քույր Կ. Ալեքյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Մ-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից մայիսի 19.05.2021թ. խախտվել է հայտ-պահանջագրով նախատեսված 1.56 կգ պանրիկը չի մատակարարվել»:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 06.07.2021թ. կազմվել է թիվ 4 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք՝ ներքոստորագրյալներս, «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար հաշվապահ՝ Ա. Գասպարյանս, անդամներ բժշկուհի՝ Մ. Հովհաննիսյանս, պահեստապետ Գ. Հովհաննիսյանս, ինչպես նաև դիետ-քույր Կ. Ալեքյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից 06.07.2021թ. չի մատակարարվել Կաթնաշոռ 1 կգ, Մածուն 50 կգ, յոգուրտ 41 հատ, Ձու 150 հատ, Պանրիկ 1.64կգ, որը նախատեսված էր 30.06.2021թ. հայտ-պահանջագրով»:

Պատվիրատուն «Կամի գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 15.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Կամի գրուպ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ.-ին կնքված «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-

ԿԳ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Կամի գրուպ» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ, համաձայն որի «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ը լուծում է վերը նշված պայմանագիրը»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 15.07.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Կամի Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 29.12.2020թ. կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ՄՏ-ԿԳ» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11714-2021 գրությամբ «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**